



CRRC
Armenia



**EURASIA
PARTNERSHIP
FOUNDATION**



Հրանտ Մաթևոսյան
HRANT MATEVOSSIAN FOUNDATION

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն

«Աղքատության նվազեցում համայնքներում. Կիրառական մոտեցումներ» ծրագիր
Community Poverty Reduction “Know How” Project

**«ՀԱՆՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ»
PUBLIC BUDGETS AND BUDGET PROGRAMME MONITORING**

Վերապատրաստման դասընթաց ԲՀԿ-ների համար
Օր - Առաջին



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ՕՐԱԿԱՐԳ

- **ՄԱՍ 1. Բյուջետային գործընթաց: Համայնքային բյուջե**
- **ՄԱՍ 2. Բյուջետային ծրագիր: Բյուջետային ծրագրերի կառուցվածքը**
- **ՄԱՍ 3. Բյուջետային ծրագիր: Ծրագրերի արդյունքային ցուցանիշներ**



This project is funded by the European Union
© 2014 EDCRC



➤ **ՄԱՍ 1. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ: ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ**



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ: ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ

- **ՀՀ բյուջետային համակարգը** երկու մակարդակի բյուջեների ամբողջությունն է՝
 - ա) առաջին մակարդակ՝ **պետական բյուջե,**
 - բ) երկրորդ մակարդակ՝ **համայնքների բյուջեներ:**

- **Պետական և համայնքի բյուջեները՝** պետությանը և ՏԻՄ-երին՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրեր են: (*«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1*)

- **Համայնքի բյուջե** եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է **ՀՀԶԾ-ի և ՏԻՄ-երի՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը:** (*«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 83, մաս 1*)



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

- **Բյուջետային գործընթացը`** յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունը հաստատելու ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների` օրենքով կանոնակարգված գործունեությունն է:

- Բյուջետային գործընթացը կարգավորվում է`
 - ԶԶ Սահմանադրություն
 - ԶԶ բյուջետային համակարգի մասին օրենք
 - ԶԶ պետական բյուջեի մասին օրենք
 - ԶԶ տեղական ինքնակառավարման մասին օրենք
 - ԶԶ կառավարության և վարչապետի որոշումներ



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միությունից ֆինանսավորված է



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ


- Հայաստանի Հանրապետությունում բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա **հունվարի 1-ից** և ավարտվում նույն տարվա **դեկտեմբերի 31-ին**:
- Տվյալ բյուջետային տարվա համար բյուջետային գործընթացը սկսվում է **ՀՀ վարչապետի կողմից առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշման ընդունման օրը** և ավարտվում՝ տվյալ տարվա **բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունները հաստատելու օրը**:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՑԻԿԼ





This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ: ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ


- Համայնքային քաղաքականությունն ձևակերպվում է հետևյալ ռեզմավարական փաստաթղթերում
 - Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր,
 - Տարեկան աշխատանքային պլան,
 - Համայնքային բյուջե:



This project is funded by the European Union
Հիմնական աջակցությունը Եվրոպական Միության կողմից է:



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ: ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ





This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորումով



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ: ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

- **ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ (ՀՀԶԾ)** սահմանվում է համայնքի տեսլականը, զարգացման հիմնական ուղղությունները, ռազմավարական գերակայությունները և նպատակները:
- **ՀՀԶԾ-ն բաղկացած է 4 բաժնից՝**
 - Համայնքի իրավիճակի նկարագրություն,
 - Նպատակների սահմանում և գործողությունների պլանավարում,
 - ՀՀԶԾ ֆինանսավորում,
 - ՀՀԶԶ մոնիթորինգ *(ծրագրի գնահատման համար կիրառվող ցուցանիշները, ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը, տեղեկատվության աղբյուրները):*
- Յուրաքանչյուր ծրագրի համար մշակվում է **Ծրագրի անձնագիր** և **Ծրագրի մոնիթորինգի պլան:**



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ: ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

- **ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ (ՏԱՊ)** մշակվում է ՀՀԶԾ հիման վրա և արտացոլում է տվյալ տարում համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայություններն ու առաջնահերթությունները, նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները, ֆինանսավորման աղբյուրները, ժամկետները և պատասխանատուները:
- ՏԱՊ-ի մշակման **նպատակներն են.**
 - համակարգել ՏԻՄ-երի տվյալ տարվա անելիքները,
 - սահմանել անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման ռազմավարություն,
 - համախմբել համայնքում նախատեսվող բոլոր ծրագրերը ՀՀԶԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և ոլորտային հիմնական նպատակների իրականացման շուրջ,
 - շաղկապել նախատեսվող ծրագրերը դրանց իրականացման արդյունքների հետ,
 - որոշակիացնել ծրագրերի ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները,
 - մշակել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման Մոնիթորինգի և գնահատման պլանը (ՄԳՊ):



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ

- **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ** սահմանում է համայնքի առաջիկա/ընթացիկ 1 տարվա ֆինանսական պլանը:
- **Համայնքների բյուջեների կառուցվածքը.**
 - Համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե)
 - Համայնքի բյուջեի ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե)



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ

■ Համայնքների բյուջեների եկամուտների կառուցվածքը

	Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե
Մուտքեր	<p>Պաշտոնական դրամաշնորհներ`</p> <ul style="list-style-type: none"> Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաները Պետական բյուջեից տրամադրվող ընթացիկ սուբվենցիաներ Այլ աղբյուրներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ 	<p>Պաշտոնական դրամաշնորհներ`</p> <ul style="list-style-type: none"> Պետական բյուջեից տրամադրվող կապիտալ սուբվենցիաներ Այլ աղբյուրներից ստացվող կապիտալ նպատակային դրամաշնորհներ



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ

■ Համայնքների բյուջեների եկամուտների կառուցվածքը

	Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե
Մուտքեր	<p>Այլ եկամուտներ`</p> <ul style="list-style-type: none"> Համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ Տեղական վճարներ Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման համար տրվող միջոցներ Համայնքի բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ 	<p>Այլ եկամուտներ`</p> <ul style="list-style-type: none"> Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերը (համայնքի սեփականությունը համարվող գույքի օտարումից եկամուտները և այլն) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումները



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ

■ Համայնքային բյուջեների ծախսերը ներկայացվում են հետևյալ դասակարգմամբ.

- **Տնտեսագիտական**
- **Գերատեսչական**
- **Գործառական**
- **Ծրագրային**



This project is funded by the European Union
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Վարչական Պատկերասրահ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ

- Բյուջեի **տնտեսագիտական դասակարգումը** ցույց է տալիս, թե հանրային ծառայությունների արտադրության համար ինչ տեսակի ռեսուրսներ են օգտագործվում:
- Համաձայն տնտեսագիտական դասակարգման բյուջեի ծախսերը դասակարգվում են՝
 - **Ընթացիկ ծախսեր**
 - Աշխատավարձ
 - Տոկոսավճար
 - Տրանսֆերտներ
 - Ապրանքների և ծառայությունների ձեռք բերում
 - **Կապիտալ ծախսեր**



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ

- Բյուջեի **գերատեսչական դասակարգումը** ծախսերի խմբավորումն է ըստ բյուջետային միջոցների անմիջական ստացողների՝ ՏԻՄ-երի գերատեսչական կառուցվածքների:

- Օրինակ՝
 - *Համայնքային կրթական ոչ առևտրային կազմակերպությունները,*

 - *Համայնքային մշակութային ոչ առևտրային կազմակերպությունները,*

 - *Համայնքային սպորտային ոչ առևտրային կազմակերպությունները,*



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի շրջանակում



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ

- Բյուջեի գործառնական դասակարգումը ցույց է տալիս, թե հանրային հատվածի հիմնական գործառնությունների (ֆունկցիաների) համար հանրությունը որքան ռեսուրս է տրամադրել:
- Առանձնացվում են բյուջետային դասակարգման հետևյալ բաժինները`

01	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ
02	Պաշտպանություն
03	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն
04	Տնտեսական հարաբերություններ
05	Շրջակա միջավայրի պաշտպանություն
06	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն
07	Առողջապահություն
08	Հանգիստ, մշակույթ և կրոն
09	Կրթություն
10	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ

- Բյուջեի **ծրագրային դասակարգումը** խմբավորում է հանրային հատվածի ծառայություններն ըստ որոշակի նպատակների:

- **Ծրագրային բյուջեն** ցույց է տալիս, թե ինչ արդյունքներ ձեռք կբերվեն բյուջետային ծրագրերն իրականացնելիս և ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ ռազմավարական ծրագրի արդյունքների ձեռքբերման համար:
 - Ի՞նչ արդյունքներ ձեռք կբերվեն,
 - Ի՞նչ ազդեցություն կլինի հասարակության վրա,
 - Ի՞նչ ազդեցություն կլինի շահառուների վրա,
 - Որքա՞ն գումար կծախսվի տվյալ ծառայությունը մատուցելու և տվյալ նպատակին հասնելու համար:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միությունից ֆինանսավորված է:



➤ **ՄԱՍ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ: ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**



This project is funded by the European Union
Մեծ Բրիտանիայի և Հյուսիս Ատլանտյան Համագործակցության կազմակերպության կողմից



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

- Բյուջետային ծրագրերը **կապող օղակ** են հանդիսանում քաղաքականության և բյուջետավորման համակարգի միջև:
- Բյուջետային ծրագրերը հանդիսանում են պետական քաղաքականությունը սահմանող ՀՀ օրենքների և ռազմավարությունների իրականացումը և համապատասխան նպատակների ձեռք բերումը ապահովող **բյուջետային գործիքներ**:
- Բյուջետային ծրագիրը պետության **կոնկրետ նպատակի** իրագործմանն ուղղված միմյանց հետ փոխկապակցված միջոցառումների համախումբ է:



This project is funded by the European Union
Մեծ Բրիտանիայի և Հյուսիս Ատլանտյան Համալսարանի կողմից



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

- Բյուջետային ծրագիրը պետք է հստակ կապված լինի քաղաքականության որոշե նպատակի/վերջնական արդյունքի հետ.
 - *Օրինակ` «Չբոսաշրջության զարգացման ծրագիրը» նպաստում է տվյալ համայնքում տուրիզմի զարգացման համար նախադրյալների ստեղծմանը:*
- Միջնույն ծրագրում պետք է ներառվեն տվյալ նպատակին կամ վերջնական արդյունքին ուղղված պետության կողմից իրականացվող բոլոր միջոցառումները:
 - *Միևնույն ծրագրում կարող են ներառվել ծառայություններ, տրանսֆերտներ, ինչպես նաև ցանկացած այլ տիպի միջոցառումներ:*



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

- Ծրագրի անվանումը
- Ծրագրի նպատակը
- Ծրագրի դասիչը
- Ծրագրի արդյունքային ցուցանիշները
- Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները
- Ծրագրի գծով ծախսերը
- Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմինը



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

- **Ծրագրի անվանումը** հանդիսանում է բյուջետային փաստաթղթերում ներկայացվող ծրագրի պաշտոնական անվանումը:
- **Ծրագրի անվանումը** առաջին հայացքից ընդհանուր պատկերացում է տալիս ծրագրի նպատակի վերաբերյալ և արտահայտում է ծրագրի էական կողմը:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

- **Ծրագրի նպատակը** արտահայտում է, թե ինչ կոնկրետ սոցիալական կամ հասարակական խնդիր է լուծվում ծրագրի իրականացմամբ:

- **Ծրագրի նպատակի** հասանելիության չափման համար սահմանվում են վերջնական արդյունքներ:

- **Ծրագրի նպատակը** պետք է լինի լինի իրագործելի և իրատեսական:

- *Օրինակ`*
 - *Համայնքը դարձնել մաքուր և հրապուրիչ*
 - *Համայնքը դարձնել լուսավոր ու անվտանգ*
 - *Բարելավել համայնքում նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը*



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի Կողմնակցություն



ԾՐԱԳՐԻ ԴԱՍԻՉԸ

- **Ծրագրի դասիչը** ծրագրի նույնականացման համար կիրառվող քառանիշ թվային կոդ է (օրինակ՝ «05-02»), որը եզակի է յուրաքանչյուր առանձին ծրագրի համար,
- Քառանիշ թվի առաջին երկու նիշերն արտացոլում են **ծախսերի գործառնական դասակարգման բաժինը (ուլորտը)**, որի կազմում ներկայացվում է ծրագիրը: Յաջորդ երկու նիշերն արտացոլում են տվյալ բաժնի (ուլորտի) **ծրագրի հերթական համարը**:
- Ծրագրի դասիչը կայուն է ժամանակի ընթացքում, այն չի փոխվում տարիների ընթացքում և չի կրկնվում:
- Ծրագրի ավարտից հետո այդ ծրագրի դասիչը չի տրամադրվում որևէ այլ նոր ծրագրի:



This project is funded by the European Union
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Կայսրության Եվրոպական միության կողմից ֆինանսավորվում է:



ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱԿՏՈՒ ՄԱՐՄԻՆԸ

- **Համայնքի բյուջեի** կատարման հիմնական **պատասխանատուն** համայնքի ղեկավարն է:
- **Ծրագրի իրականացման** համար **պատասխանատու** է հանդիսանում համայնքի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը / ստորաբաժանման ղեկավարը:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

- **Ծրագրի միջոցառումները** ծրագրի շրջանակներում համայնքի միջամտություններն են, որոնք հատկապես ուղղված են տվյալ ծրագրի համար սահմանված նպատակի իրագործմանը:
- **Ծրագրի շրջանակներում** կարող են իրականացվել տարբեր բնույթի միջամտություններ՝ ծառայությունների մատուցում, ապրանքների կամ տրանսֆերտների տրամադրում, ոչ ֆինանսական (կապիտալ) ակտիվների ստեղծում և այլն:
- *Օրինակ, «Աղբահանության ծառայությունների մատուցում» ծրագրի շրջանակներում կարող են իրականացվել մի շարք միջոցառումներ՝ աղբամանների ձեռքբերում և տեղադրում, աղբահանության համար նախատեսված մեքենաների ձեռքբերում, աղբահանության ծառայության կազմակերպում և իրականացում և այլն:*



This project is funded by the European Union
Մեծ Բրիտանիայի և Հյուսիս Այրլանդի Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ



ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

- **Միջնույն ծրագրի շրջանակներում պետք է ներառվեն տվյալ նպատակին կամ վերջնական արդյունքին ուղղված բոլոր տիպի միջոցառումները, անկախ ծախսերի բնույթից (ընթացիկ, կապիտալ և այլն):**
- **Բյուջետային հատկացումները ֆ արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշները սահմանվում են հենց ծրագրի միջոցառումների մակարդակում:**
- **Միջոցառումները հանդիսանում են բյուջետային հատկացումների սահմանման, բյուջեի կատարման ֆ հաշվետվողականության հիմքը:**



This project is funded by the European Union
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսայրոստանի Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԸ

- **Ծրագրի գծով ծախսերը** տվյալ ծրագրի շրջանակներում ընդգրկված միջոցառումների իրականացման համար կատարվող բոլոր ծախսերն են:
- Ծրագրի գծով ծախսերը տվյալ նպատակին ուղղված բոլոր ծախսերն են:
- Ծրագրի գծով ծախսերը հանդիսանում են տվյալ ծրագրի միջոցառումների գծով ծախսերի պարզ հանրագումար:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ



ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

- Միջոցառման անվանումը
- Միջոցառման նկարագրությունը
- Միջոցառման դասիչը
- Միջոցառման շահառուները
- Միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ոչ ֆինանսական չափորոշիչները և ցուցանիշները



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ և ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- **Միջոցառման անվանումը** բյուջետային փաստաթղթերում ներկայացվող միջոցառման պաշտոնական անվանումն է:
- Միջոցառման անվանումը առաջին հայացքից ընդհանուր պատկերացում է տալիս պետության միջամտության ձևի վերաբերյալ և արտահայտում է միջոցառման էական կողմը:
- **Միջոցառման նկարագրությունը** նկարագրում է տվյալ միջոցառման հիմնական առանձնահատկությունները:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- **Միջոցառման նկարագրությունը** պետք է նկարագրի տվյալ միջոցառման հիմնական առանձնահատկությունները:
- Օրենսդրական պահանջներից կամ պետության պարտադիր պարտավորություններից բխող միջոցառման դեպքում նկարագրությունը կարող է պարունակել նաև հղումներ այդ պահանջներին կամ պարտավորություններին:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ



ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԴՎԱՏԻՉԸ

- **Միջոցառման դասիչը** դա ծրագրի միջոցառման նույնականացման համար կիրառվող քառանիշ թվային կոդ է (օրինակ «01-02» կամ «03-02»):
- Քառանիշ թվի առաջին երկու նիշերն արտացոլում են տվյալ բաժնի (ոլորտի) այն **ծրագրի հերթական համարը**, որի կազմում ներառված է միջոցառումը: Հաջորդ երկու նիշերն արտացոլում են տվյալ ծրագրի մեջ ներառված **միջոցառման հերթական համարը**:
- Միջոցառման դասիչը`
 - ունիկալ է յուրաքանչյուր ծրագրի շրջանակներում ներառված յուրաքանչյուր միջոցառման համար,
 - եզակի է միայն կոնկրետ ծրագրի շրջանակներում,
 - հետագայում չի կարող տրամադրվել տվյալ ծրագրի շրջանակներում իրականացվող որևէ այլ նոր միջոցառման:



This project is funded by the European Union
Մաշինային Եվրոպական Միությունից



ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

- **Միջոցառման շահառուները** արտաքին միավորներ հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձինք են (համայնքի բնակիչներ, կազմակերպություններ) կամ դրանց որոշակի խմբեր, որոնց կարիքների բավարարմանն անմիջականորեն ուղղված են միջոցառման շրջանակներում մատուցվող ծառայությունները կամ այլ միջամտությունները:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



10-01 «Սոցիալական աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին»

Բյուջետային ծրագրի կառուցվածքի և բաղադրիչների քննարկում



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



10-01	Ծրագրի անվանումը`
	Սոցիալական աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին
	Ծրագրի նպատակը`
	Բարձրացնել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը
	Վերջնական արդյունքի նկարագրությունը`
	Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցությունը հասցեականությունը բարձրացվել է 3%-ով, բնակիչներն գոհ են իրականացվող սոցիալական ծրագրից

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	
01-01	<i>Դրամական օգնություն նորածինների ընտանիքներին</i>
01-02	<i>Դրամական օգնություն Դիլիջան համայնքի սոցիալապես անապահով անձանց</i>
01-06	<i>Աջակցություն ՀԿ-ների կողմից իրականացվող սոցիալական և գեղարվեստական ուղղվածություն ունեցող ծրագրերի իրականացման համար</i>
01-09	<i>Ամենամսյա դրամական օգնություն Հայրենական պատերազմի վետերաններին</i>
01-10	<i>Ամենամսյա աջակցություն «Հոլյսի կամուրջ» ՀԿ-ին</i>



This project is funded by the European Union
ժամանակակից Եվրոպական միությունից ֆինանսավորված է



➤ **ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ 2.1: ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՄՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ**



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միությունից ֆինանսավորված է:



ՄԱՍ 3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ: ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ



This project is funded by the European Union
Մեծ Երկրանոցի Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

- Բյուջետային ծրագրի մակարդակում
վերջնական արդյունքի չափորոշիչներ


- Բյուջետային միջոցառման մակարդակում
ուղղակի արդյունքի չափորոշիչներ



This project is funded by the European Union



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՇՐԹԱՆ





This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- Վերջնական արդյունքի չափորոշիչները և ցուցանիշները հանդիսանում են բյուջետային ծրագրերի **նպատակների չափման, կատարողականի և արդյունավետության** գնահատման հիմնական գործիքը:
- Վերջնական արդյունքի ցուցանիշները հնարավորություն են տալիս հետևելու, թե արդյոք **իրագործվում է ծրագրի նպատակը և որքանով է այն իրագործվում:**
- Վերջնական արդյունքի ցուցանիշները հաճախ ներկայացվում են որպես **հասարակության կյանքի պայմանների բարելավում կամ դրան նպաստող դրական փոփոխություն:**
- Վերջնական արդյունքները **լիովին վերահսկելի չեն:**



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- **Միջևույն նպատակին կարող են համապատասխանել մեկից ավելի վերջնական արդյունքի չափորոշիչներ:**

Նպատակ`

Համայնքում նախադպրոցական կրթության ծառայության որակի բարելավում:

Վերջնական արդյունքի չափորոշիչներ`

1. Ձեռուցվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը
2. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում նորացված փափուկ գույքով ապահովված խաղասենյակների կշիռը



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ



ՎԵՐՉՆԱԿԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- **Վերջնական արդյունք**

Համայնքում բնակչության խմելու ջրի հասանելիությունն ունեցող բնակչության ան

- **Վերջնական արդյունքի չափորոշիչի անվանումը**

խմելու ջրի մշտապես հասանելիությունն ունեցող համայնքային բնակչության մասնաբաժին



This project is funded by the European Union
Սույն նախագիծը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից



ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- Ուղղակի արդյունքի (ոչ ֆինանսական) չափորոշիչները **անմիջականորեն նկարագրում են միջոցառումը:**
- Ուղղակի արդյունքի չափորոշիչների հիման վրա **պետք է գնահատվի տվյալ միջոցառման իրականացումը:**
- Միջոցառումների արդյունքային ցուցանիշները **վերահսկելի են**, այսինքն, պետական մարմինը կամ կազմակերպությունը, որն իրականացնում է այդ միջոցառումները, կարող է **վերահսկել դրանք և պատասխանատու է դրանց համար:**
- Ուղղակի արդյունքի չափորոշիչները սովորաբար արտահայտում են իրականացվող միջոցառման **քանակը, որակը, ժամկետը, վայրը, ծածկույթը** և այլն:



This project is funded by the European Union
Մեծ Երկրանոցի Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Քանակական
ցուցանիշներ



Չափորոշում են տրամադրվող ծառայությունների քանակը կամ ծավալը, արտահայտվում են ինչպես բացարձակ թվով, այնպես էլ տոկոսային հարաբերությամբ:

Որակական
ցուցանիշներ



Գնահատում են մատուցվող ծառայության որակը շահառուի տեսանկյունից: Ցույց է տալիս տրամադրվող ծառայության կամ ապրանքի համապատասխանությունը որոշակի ստանդարտի:

Ժամկետայնության
ցուցանիշներ



Բնութագրում են ծառայության իրականացման կամ ավարտի ժամկետը, ծառայության արդյունավետությունը՝ շահառուների կարիքներին արագ և ժամանակին արձագանքելու իմաստով:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



10-01 – «Սոցիալական աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին»

Բյուջետային ծրագրի արդյունքային ցուցանիշների քննարկում



This project is funded by the European Union
Մեծ Բրիտանիայի և Հյուսիս Այրլանդիայի Միացյալ Կայսրությունը



ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

10-01	Սոցիալական աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին
	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից՝ այո, ոչ, մասամբ



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ծրագրի դասիչը՝	10-01
Միջոցառման դասիչը՝	01-01
Միջոցառման անվանումը՝	Դրամական օգնություն նորածինների ընտանիքներին
Միջոցառման նկարագրությունը՝	Համայնքի 260 նորածինների մայրերին աջակցություն
Արդյունքի չափորոշիչներ	
<i>Նորածին երեխաների թիվը</i>	
<i>Տրամադրվող գումարի չափը յուրաքանչյուր երեխային՝ հազար դրամ</i>	
<i>Տրամադրվող գումարի հասցեականությունը՝ այո, ոչ, մասամբ</i>	
<i>Ծրագրի իրականացման ժամկետը՝ տարի</i>	



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ծրագրի դասիչը՝	10-01
Միջոցառման դասիչը՝	01-02
Միջոցառման անվանումը՝	Դրամական օգնություն Դիլիջան համայնքի սոցիալապես անապահով անձանց
Միջոցառման նկարագրությունը՝	Դիլիջան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին ցուցաբերվում է աջակցություն՝ ըստ ստացվող դիմումների
Արդյունքի չափորոշիչներ	
<i>Դիլիջան բնակավայրի սոցիալապես անապահով բնակիչների թիվը</i>	
<i>Տրամադրվող գումարի չափը յուրաքանչյուր երեխային՝ հազար դրամ</i>	
<i>Տրամադրվող գումարի հասցեականությունը՝ այո, ոչ, մասամբ</i>	
<i>Ծրագրի իրականացման ժամկետը՝ տարի</i>	



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ծրագրի դասիչը՝	10-01
Միջոցառման դասիչը՝	01-03
Միջոցառման անվանումը՝	Աջակցություն ՀԿ-ների կողմից հրականացվող սոցիալական և գեոդերային ուղղվածություն ունեցող ծրագրերի հրականացման համար
Միջոցառման նկարագրությունը՝	Դրամաշնորհի հատկացում այն ծրագրերին որոնք ունեն գեոդերային և սոցիալական ուղղվածություն:
Արդյունքի չափորոշիչներ	
<i>Իրականացվող ծրագրերի քանակը</i>	
<i>Ծրագրի հրականացման ժամկետը՝ տարի</i>	



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ



ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ծրագրի դասիչը՝	10-01
Միջոցառման դասիչը՝	01-04
Միջոցառման անվանումը՝	Ամենամսյա դրամական օգնություն Հայրենական պատերազմի վետերաններին
Միջոցառման նկարագրությունը՝	Հայրենական պատերազմի 4 վետերանների ամեն ամիս տրվում է 10000 դրամ օգնություն
Արդյունքի չափորոշիչներ	
<i>Վետերանների թիվը</i>	
<i>Տրամադրվող գումարի չափը յուրաքանչյուր երեխային՝ հազար դրամ</i>	
<i>Տրամադրվող գումարի հասցեականությունը՝ այո, ոչ, մասամբ</i>	
<i>Գումարի տրամադրման հաճախականությունը</i>	



This project is funded by the European Union
Մաքուր Գրգռվածությունը Եվ Մեծ Երկիրը



ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ծրագրի դասիչը՝	10-01
Միջոցառման դասիչը՝	01-05
Միջոցառման անվանումը՝	Ամենամսյա աջակցություն «Հուլիսի կամուրջ» ՀԿ-ին
Միջոցառման նկարագրությունը՝	Աջակցություն «Հուլիսի կամուրջ» ՀԿ-ին դրամաշնորհի տեսքով
Արդյունքի չափորոշիչներ	
<i>Շահառուների թիվը</i>	
<i>Տրամադրվող գումարի չափը յուրաքանչյուր երեխային՝ հազար դրամ</i>	
<i>Տրամադրվող դրամաշնորհի հաճախականությունը ամսվա կտրվածքով՝ անգամ</i>	



This project is funded by the European Union
Մեծ Երկրի Եվրոպական Միությունից ֆինանսավորված է:



➤ **ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ 3.1: ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ
ՄԵՂՄՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ**



CRRC
Armenia



**EURASIA
PARTNERSHIP
FOUNDATION**



Հրանտ Մաթևոսյան
HRANT MATEVOSSIAN FOUNDATION

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն

«Աղքատության նվազեցում համայնքներում. Կիրառական մոտեցումներ» ծրագիր
Community Poverty Reduction “Know How” Project

**«ՀԱՆՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ»
PUBLIC BUDGETS AND BUDGET PROGRAMME MONITORING**

Վերապատրաստման դասընթաց ԲՀԿ-ների համար
Օր - Երկրորդ



This project is funded by the European Union
Մաշկութեամբ Երկրի Եվրոպական Միությունից



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- **ՄԱՍ 4. Համայնքային ծրագրերի մոնիթորինգ և գնահատում**
- **ՄԱՍ 5. Բյուջետային տեղեկատվություն: Հիմնական աղբյուրներ և ներկայացվող հաշվետվությունների կառուցվածքը**
- **ՄԱՍ 6. Մասնակցային բյուջետավորումը համայնքներում: ՔՀԿ-ների դերը, մասնակցության հնարավորություններ և ժամկետներ**



This project is funded by the European Union
Հիմնականում ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից



➤ ՄԱՍ 4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ





This project is funded by the European Union
Մեծ Երկարաժամկետային Համագործակցության ծրագրի շրջանակում



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- **Մոնիտորինգը (մշտադիտարկումը)** շարունակաբար իրականացվող գործառույթ է, որը որոշակի ցուցանիշների գծով տվյալների համակարգված հավաքագրման միջոցով ծրագրի կառավարիչներին և շահագրգիռ կողմերին տրամադրում է տեղեկություններ **ծրագրի իրականացման առաջնաքի ֆարդյունքների ձեռքբերման**, ինչպես նաև **ռեսուրսների օգտագործման աստիճանի** վերաբերյալ:
- **Գնահատումը** ծրագրի կամ քաղաքականության կառուցվածքի, իրականացման ընթացքի և արդյունքների համակարգային և անկողմնակալ ուսումնասիրություն-գնահատում է: Այն ուղղված է որոշելու **համապատասխանությունը ֆնպատակների իրագործման աստիճանը, իրականացման արդյունավետությունը, ազդեցությունը ֆ կայունությունը:**



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

■ Գնահատումը կարող է կազմակերպվել.

- ծրագրի իրականացման ընթացքում – «Միջանկյալ գնահատում»,
- ծրագրի իրականացման ավարտից անմիջապես հետո – «Ավարտական գնահատում»,
- ծրագրի ավարտից մի քանի տարի անց – «Ազդեցության գնահատում»:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Գնահատման գործընթացում հավաքագրված **տվյալները, վերլուծությունները և արդյունքները** պետք է հասցեագրեն կամ կիրառվեն հասկանալու համար`
 - թիրախային խմբի կարիքները (**կարիքների գնահատում**),
 - ծրագրի հիմնավորվածությունը և, կամ տրամաբանական շրջանակը (**ծրագրի կառուցվածք/դիզայն**),
 - ծրագրի իրականացման համապատասխանությունը սահմանված խնդիրներին (**համապատասխանության գնահատում**),
 - ծրագրի/միջոցառումների իրականացման համար լավագույն հնարավոր տարբերակի կիրառումը (**արդյունավետության գնահատում**),
 - ծրագրի/միջոցառումների հանգումը կարճաժամկետ կամ միջնաժամկետ արդյունքների (**արդյունքների գնահատում**),
 - ծրագրի արդյունքում (ավարտից հետո) ձեռքբերված երկարաժամկետ և տևական փոփոխությունները (**ազդեցության գնահատում**):



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Մոնիթորինգը և գնահատումը կարող է ծառայել հետևյալ **նպատակներին`**
 - Ծրագրերի իրականացման խնդիրների լուծում,
 - Կառավարության ներքին հաշվետվողականության բարելավում,
 - Հանրությանը տեղեկատվության տրամադրում,
 - Ծրագրի վերանայումներ, ձևակերպման և կառուցվածքի բարելավում,
 - Ծրագրերի համակարգում և գերակայությունների սահմանում:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Գնահատման գործիքակազմի ընտրության համար նախ պետք է դիտարկել հետևյալ **հարցադրումները**.
 - Որն է գնահատման նպատակը, գնահատման արդյունքում ստացված տեղեկատվությունը ինչ որոշումների համար է հիմք ծառայելու,
 - Ինչպիսի տվյալներ, տեղեկություններ են անհրաժեշտ տվյալ որոշումների կայացման համար,
 - Ծրագրի իրականացման որ փուլին է վերաբերելու գնահատումը (գնահատման իրականացման ժամկետը),
 - Ովքեր են գնահատման տեղեկատվություն շահառուները և օգտագործողները,
 - Ինչպիսի ֆինանսական և մարդկային ռեսուրսներ են անհրաժեշտ գնահատումն իրականացնելու համար:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միությունից ֆինանսավորված է



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Մոնիթորինգի և գնահատման գործիքներից են.
 - ծախսեր-օգուտներ վերլուծությունները,
 - արդյունավետության և ազդեցության գնահատումները,
 - մասնակցային արագ արձագանքման մեթոդները,
 - շահառուների շրջանում հետազոտությունները և այլն):



This project is funded by the European Union
Մեծ Բրիտանիայի և Հյուսիս Ատլանտյան Համագործակցության կազմակերպության կողմից



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Ծրագրի գնահատումները, բովանդակային իմաստով, կարելի է դասակարգել երեք հիմնական խմբերի՝
 - նպատակիների գնահատումներ,
 - գործընթացների գնահատումներ,
 - ազդեցության գնահատումներ:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

■ ՆՊԱՏԱԿԻՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ: Հիմնական հարցադրումներ

- Արդյո՞ք քաղաքականությունները կամ ծրագրերն ունեն հստակ նպատակներ:
- Արդյո՞ք ծրագրի ձևակերպումն այնպիսին է, որ թույլ է տալիս հասնել նպատակներին:
- Որքանո՞վ են իրագործվել ծրագրի նպատակները:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

■ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ: Հիմնական հարցադրումներ

- Որո՞նք են ծառայության մատուցման համար իրականացվող գործողությունները: Որքա՞նով են դրանք համապատասխանում արդյունքների ձեռք բերմանը:
- Արդյո՞ք այդ գործողություններն արդյունավետ են:
- Արդյո՞ք ներդրվել են համապատասխան ռեսուրսներ և համակարգեր:
- Արդյո՞ք ծրագրի մասնակիցները ստանում են որակյալ և ցանկալի ծառայություններ:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միությունից ֆինանսավորված է:



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

■ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ: Հիմնական հարցադրումներ

- Ինչպե՞ս է փոփոխվել շահառուների բարեկեցությունը ծրագրի իրականացման արդյունքում:
- Կա՞ն արդյոք չնախատեսված ազդեցություններ՝ դրական կամ բացասական:
- Արդյո՞ք ծրագրի իրականացման ծախսերը հիմնավորված են ազդեցությունների համեմատ:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

■ Գնահատման 5 ստանդարտ չափորոշիչները.

1. Համապատասխանություն,
2. Նպատակների հասանելիություն,
3. Արդյունավետություն,
4. Ազդեցություն,
5. Կայունություն:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Արդյոք ծրագրով նախատեսվող նպատակները համապատասխանում են շահառուների պահանջներին, երկրի կարիքներին և քաղաքականությունների գերակայություններին

- Ծրագիրը համապատասխանում է արդյոք ռազմավարական գերակայություններին և ընթացիկ նախաձեռնություններին,
- Ծրագրի գործողությունների տրամաբանական հիմնավորվածությունը,
- Ոչ ֆինանսական ինդիկատորների համապատասխանությունը Ծրագրի նպատակին,
- Որքանով է հայտարարված նպատակը համապատասխանում շահառուների իրական կարիքներին և առկա խնդիրներին,
- Ճկունությունը, իրավիճակի փոփոխությանն արագ արձագանքելու հնարավորությունները,
- Հիմնական շահառուներին եւ թիրախային խմբերին սահմանելու որակներ, ինստիտուցիոնալ կարողությունների հետ կապված հարցեր,
- Շահառուների մասնակցությունը Ծրագրի դիզայնին և կառավարմանը,
- Ծրագրի իրատեսականությունը ֆինանսական, մարդկային և կառավարչական ռեսուրսների ներդրման իմաստով:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Վերաբերվում է ծրագրի արդյունքների և նպատակների հասանելիությանը

- Արդյոք սպասվող արդյունքները ձեռք են բերվել՝ շահառու տարբեր խմբերի համար,
- Ինչպիսին է ծրագրի առաջընթացը նպատակներին հասնելու իմաստով,
- Առկա են արդյոք կատարողական ցուցանիշներ ծրագրի նպատակներին հասնելու առաջընթացը գնահատելու համար,
- Հնարավոր է արդյոք հասնել սահմանված նպատակին սահմանված ժամկետներում և առկա ռեսուրսներով,
- Ապահովվել է արդյոք շահառուների մասնակցությունը/հետադարձ կապը ծրագրային միջոցառումներին:



This project is funded by the European Union
Մեծ Բրիտանիայի և Հյուսիս Ատլանտյան Համագործակցության կազմակերպության կողմից



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Որքան արդյունավետ են ռեսուրսները փոխակերպվել սպասվող արդյունքների՝ քանակի, որակի և ժամկետների տեսանկյունից

- Կառավարման որակ և պատշաճ ընթացակարգերի ապահովում,
- Այլընտրանքային նմանատիպ ծրագրերի ծախսերի հետ համեմատական,
- Համապատասխան միջոցների և համակարգերի առկայություն,
- Արդյոք ծրագիրն իրականացվում է ըստ պլանավորվածի,
- Արդյոք ծրագրի շահառուները ստանում են սահմանված ծառայությունները,
- Արդյոք ծրագրի շահառուները բավարարված են մատուցված ծառայություններից,
- Արդյոք ծրագրի հասցեականությունն ապահովված է:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

4. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Դրական և բացասական, առաջնային և երկրորդային, կարճաժամկետ և երկարաժամկետ, սպասվող և անսպասելի, ուղղակի և անուղղակի հնարավոր ազդեցությունների գնահատում

- Ինչպիսին են ծրագրի ազդեցությունները՝ տնտեսական, սոցիալական և այլ,
- Ինչպիսի ազդեցություններ է ունեցել ծրագիրը տարբեր շահառու խմբերի վրա,
- Արդյոք ձեռք են բերվել ցանկալի ազդեցությունները,
- Ինչպիսի այլ նախատեսված և չնախատեսված ազդեցություններ են առկա,
- Ծախսերի հիմնավորվածությունը ազդեցությունների իմաստով:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

5. ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Կշարունակվեն արդյոք ծրագրի դրական արդյունքները

- Տարբեր շահառուների մասնակցությունը և սեփականության զգացումը,
- Քաղաքականությունների աջակցությունը,
- Կառավարության ինստիտուցիոնալ կարողությունները,
- Սոցիալ մշակութային գործոններ,
- Ֆինանսական կայունություն,
- Տեխնիկական գործոններ և այլն:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



➤ **ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ 4.1: ՄՇԱԿԿԱԾ ԱՂՔԱՏԱՄԵՏ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ**



This project is funded by the European Union
Մաքու աշխարհի համագործակցության ծրագրի ֆինանսավորմամբ



➤ **ՄԱՍ 5. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ: ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ: ԱՂԲՅՈՒՐՆԵՐ





■ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ





1. Համայնքապետարանի կայք  Համայնքի բյուջե

Օրինակ` Դիլիջան <https://www.dilijancity.am/Pages/Home/default.aspx>

Վանաձոր https://vanadzor.am/hamaynqi_byuge/

Գյումրի <https://www.gyumricity.am/hy/gyumri-community/community-budget>

2. Մարզպետարանի կայք  Համայնքներ  Համայնքների բյուջեներ
-  Համայնքային բյուջետային ծախսեր
 -  Համայնքային բյուջետային եկամուտներ

3. ՀՀ ՏԿԵՆ կայք  Բյուջետային գործընթաց  ՀՀ համայնքների բյուջետային ծախսեր
-  ՀՀ համայնքների բյուջեներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաներ
 -  ՀՀ համայնքների բյուջետային եկամուտներ



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ: ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- **Համայնքի բյուջեն հաստատող իրավական փաստաթուղթը** համայնքի ավագանու ընդունած՝ **համայնքի բյուջեի մասին որոշումն է:**
- **Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման կառուցվածքը.**
 - **Հատված 1.** Համայնքի բյուջեի եկամուտները
 - **Հատված 2.** Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման
 - **Հատված 3.** Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման
 - **Հատված 4.** Համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)
 - **Հատված 5.** Համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները
 - **Հատված 6.** Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման



This project is funded by the European Union
Մեծ Բրիտանիայի և Հյուսիս Ատլանտյան Համագործակցության կազմակերպություն



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ: ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

■ Համայնքի ծրագրային բյուջեի կառուցվածքը.

■ Ծրագրային մաս

- Համայնքի ԾԲ ծրագրերի նպատակները, վերջնական արդյունքի նկարագրությունները, միջոցառումները
- Համայնքի ԾԲ ծրագրերի վերջնական արդյունքի ցուցանիշները
- Համայնքի բյուջեի միջոցառումների արդյունքային ցուցանիշները

■ Ֆինանսական մաս (Հատված 1 – Հատված 6)



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միությունից ֆինանսավորված է:



➤ **ՄԱՍ 6. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ:
ՔՀԿ-ՆԵՐԻ ԴԵՐԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԺԱՄԿԵՏՆԵՐ**



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

- **ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ** իրենից ներկայացնում է բնակիչների ներգրավումը համայնքային կամ պետական միջոցների բաշխմանը վերաբերող որոշումների կայացման գործընթացում:
- **Մասնակցային գործընթացներ** են համարվում բյուջետային գործընթացի շրջանակներում նախատեսված հանրային իրազեկման և հանրության հետ համագործակցության մեխանիզմների և գործընթացների ամբողջությունը:
- Մասնացային գործընթացները նպատակ ունեն քաղաքացիական **հասարակության ներգրավման միջոցով աջակցել բյուջետային որոշումների կայացմանը:**
- Մասնակցային գործընթացները պետք է բարձրացնեն **պետական մարմինների հաշվետվողականությունը քաղաքացիների առջյ՝** ձևավորելով փոխադարձ վստահության մթնոլորտ:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՄԱՍՆԱԿԳԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

- Մասնակցային բյուջետավորման գործընթացում **բնակչության ներգրավվածության ձյերը** կարող են տարբեր լինել.

- **Տեղեկատվության տրամադրում**

Բնակչությանը տրամադրել տեղեկատվություն, որը նրանց կօգնի հասկանալ համայնքում առկա խնդիրները և հնարավոր լուծումները:

- **Խորհրդակցում**

Բնակչությունից ստանալ կարծիքներ հնարավոր լուծումների վերաբերյալ:

- **Ներգրավում**

Ուղղակիորեն աշխատել բնակչության հետ, որպեսզի նրանց մտահոգությունները և կարծիքները պատշաճ կերպով հաշվի առնվեն և դիտարկվեն բյուջետավորման գործընթացում:

- **Համագործակցություն**

Համագործակցել բնակչության հետ գործընթացի յուրաքանչյուր փուլում՝ առկա խնդիրների բացահայտումից մինչև հնարավոր լուծումների քննարկում

- **Հզորացում**

Տրամադրել բնակչությանը վերջնական որոշում կայացնելու հնարավորություն



This project is funded by the European Union
Մաշինային Գիտությունների Կենտրոն



ՄԱՍՆԱԿԳԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

- Մասնակցային բյուջետավորման գործընթացների իրականացման փուլերը.
 - Աշխատանքային խմբի ստեղծում
 - Հանրային իրազեկում
 - Աջակցություն առաջարկների մշակմանը
 - Առաջարկների հավաքագրում և քվեարկություն
 - Առաջարկների ուսումնասիրություն և ընտրություն
 - Նախագծերի իրականացում



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միությունից ֆինանսավորված է



ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

- ՀՀ համայնքների բնակիչները կարող են **անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը**՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու հնարավորություն (Սահմանադրության 183-րդ հոդվածի 2-րդ մաս):
- Համայնքի բոլոր բնակիչները կարող են **ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա**: Յուրաքանչյուր համայնք պետք է ունենա տեղական ինքնակառավարմանը **բնակիչների մասնակցության կարգ** (Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք):
- ՀՀ օրենսդրությամբ համայնքները պետք է ապահովեն.
 - **Խորհրդակցական մասնակցային բյուջետավորում**:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

- Մասնակցային բյուջետավորման եղանակները
 - Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի ձևավորում և գործունեություն
 - Համայնքում հանրային լսումների և (կամ) քննարկումների կազմակերպում և անցկացում
 - Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու՝ բնակիչների նախաձեռնության ներկայացում



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ՔՅԿ-ՆԵՐԻ ԴԵՐԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐ

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ


- Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կամ տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ **ձյավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին:**
- **Խորհրդակցական մարմնում** ընդգրկվում են **աշխատակազմի 3 համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետներ**, ինչպես նաև **համայնքի ավագանու մեկից երեք անդամներ:** Իրենց համաձայնությամբ դրանում **կարող են ընդգրկվել համայնքի բնակիչներ, փորձագետներ 3 այլ շահագրգիռ անձինք** (օրինակ՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ):



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի Կողմնակցություն



ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԴԵՐԸ





This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ՔՅԿ-ՆԵՐԻ ԴԵՐԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

- Նախքան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կամ տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը, **համայնքի ղեկավարը պետք է կազմակերպի 3 անցկացնի հանրային բաց լսումներ կամ քննարկումներ:**
- **Հանրային լսումները կամ քննարկումները կազմակերպվում են.**
 - **հանդիպումների միջոցով,**
 - **հանրային լսումներ/քննարկումներ առցանց պլատֆորմի՝ համայնքների կայքերում կամ հարցումների կազմակերպման և անցկացման միջոցով,**
 - **համապատասխան ոլորտի փորձագետների (մասնագետների) հետ փակ քննարկումներ անցկացնելով:**

Նշված մասնակցության ապահովման միջոցներն ու եղանակները սպառնիչ չեն, և համայնքները կարող են հնարավորինս լայն գործիքակազմ կիրառել:



This project is funded by the European Union
Մաքուր Գնառուցման Միջոցառում



ՔՀԿ-ՆԵՐԻ ԴԵՐԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

- Համայնքի բյուջեի **կատարման տարեկան հաշվետվությունը** համայնքի ավագանու հաստատելուց հետո **հնգօրյա ժամկետում հրապարակվում է** տեղական մամուլում և www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների ինտերնետային պաշտոնական կայքում:
- **Համայնքը** (նախկինում՝ 3000 և ավելի բնակիչ ունեցող) պետք է ունենա **ինտերնետային պաշտոնական կայք**, որտեղ, ի լրումն այլ տեղեկատվության, պետք է հրապարակվեն համայնքի բյուջեն, բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, համայնքում բնակիչների հետ հանդիպումների, հանրային լսումների և քննարկումների նյութերը, ընթացակարգը, անցկացման վայրը, ժամը և այլն:
- Համայնքներում (նախկինում՝ 3000 և ավելի բնակիչ ունեցող) **ավագանու հրապարակային նիստերն առցանց հեռարձակվում են** համայնքի ինտերնետային պաշտոնական կայքում:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ՔՅԿ-ՆԵՐԻ ԴԵՐԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

- **Համայնքի բնակիչները** (համայնքում հաշվառված, 16 տարին լրացած) կարող են հանդես գալ **ավագանու** նիստի օրակարգում հարց **ընդգրկելու** նախաձեռնությամբ.
 - 10,000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում ոչ պակաս, քան բնակչության 1 տոկոսը,
 - 1,000-ից մինչև 10,000 բնակիչ ունեցող համայնքներում ոչ պակաս, քան բնակչության 2 տոկոսը,
 - մինչև 1,000 բնակիչ ունեցող համայնքներում ոչ պակաս, քան բնակչության 4 տոկոսը:
- Ավագանու նիստի օրակարգում հարց **ընդգրկելու** նախաձեռնությունն ստորագրում են համայնքի՝ դրան կողմ բնակիչները և **ներկայացնում են համայնքի ղեկավարին:**
- Համայնքի բնակիչների նախաձեռնությունը ներկայացվում և **քննարկվում է ավագանու նիստում** ոչ ուշ, քան համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո՝ **մեկ ամսվա ընթացքում:**
- Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և սույն հոդվածով սահմանված կարգով **ընդգրկվել օրակարգում՝ դրա հերթական (նաև առաջին) քննարկումից առնվազն վեց ամիս հետո:**




This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի շրջանակներում



ՔՅԿ-ՆԵՐԻ ԴԵՐԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐ

ՆԱԽԱԾԵՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ





This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

- Հանրային կառավարման հաշվետվողական մշակույթը և հանրային քաղաքականությունների և ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում հանրության տարբեր շերտերի ընդգրկման հնարավորությունների ապահովումը ենթադրում է բյուջետային տեղեկատվության մատչելիություն և լայն հասանելիություն:
- «Քաղաքացու բյուջեն» ընդունված ձևաչափ է՝ հանրությանը բյուջետային տեղեկատվությունն առավել հասանելի և հանրամատչելի դարձնելու համար:

https://minfin.am/website/images/website/byuje_amsakan/Citizen%20Budget%202020-final.pdf



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ



ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ: ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

■ Նախատեսվել են բյուջետային տեղեկատվության հանրամատչելի բովանդակությամբ հրապարակման՝ «Քաղաքացու բյուջե» միջոցառումներ.

- «Քաղաքացու բյուջեն» ընդունված ձևաչափ է՝ հանրությանը բյուջետային տեղեկատվությունն առավել հասանելի և հանրամատչելի դարձնելու համար:
- ՀՀ-ում Քաղաքացու բյուջեի մշակման և հրապարակման գործընթացը հանդիսանում է տարեկան բյուջետային գործընթացի մաս:
- Քաղաքացու բյուջեն, ըստ էության, հիմնական բյուջետային պաշտոնական փաստաթուղթն է, որը մշակվում և ուղղվում է սովորական քաղաքացուն:
- Քաղաքացու բյուջեի մշակման գործընթացին մասնակցում են բյուջետային գործընթացում ընդգրկված բոլոր հայտատու պետական մարմինները՝ տրամադրելով համապատասխան տեղեկատվություն ՀՀ ՖՆ: ՀՀ ՖՆ-ն ամփոփում է ստացված տեղեկատվությունը և դրանք հրապարակում:
- Քաղաքացու բյուջեն կարևոր գործիք է կառավարության թափանցիկության բարձրացման և քաղաքացիների մասնակցության խթանման համար:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ: ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

- **Պետական մարմինները** բյուջետային գործընթացի յուրաքանչյուր փուլում պետք է պատշաճ կերպով **իրազեկեն/ծանուցեն հանրությանը՝ ի դեմս ԶՅԿ-ների**, իրականացվող բոլոր մասնակցային գործընթացների վերաբերյալ:
- **Հանրային քննարկումները** հանդիսանում են ուղղորդված հանրային երկխոսության և հանրային կարծիքի ուսումնասիրության գործընթացներ: Դրանք ներառում են կարծիքների փոխանակման, բանավիճման, ընդհանուր դիրքորոշումների ձևավորման և համատեղ որոշումների կայացման գործընթացներ, որոնք ենթադրում են անմիջական կամ ինտերակտիվ շփումներ մասնակից կողմերի միջև:



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ



ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<p>Հայտատու մարմինների կողմից ՀՀ \$Ն ներկայացված 2023-2025թթ ՄԺԾԾ (ներառյալ ՀՀ 2023թ. պետական բյուջեի) հայտերի հրապարակում հայտատու մարմինների ինտերնետային կայքերում</p>	<p>մինչ մարտի 15, 2022թ.</p>
<p>Բյուջետային հայտերի շուրջ ՔՀԿ-ների հետ քննարկումների անցկացում և արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության ներկայացում \$Ն</p>	<p>մինչ ապրիլի 8, 2022թ.</p>
<p>«Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակված տարբերակի և հանրային քննարկումների ամփոփաթերթերի տեղադրում ՀՀ \$Ն կայքում</p>	<p>ՊԲ նախագիծը ԱԺ ներկայացնելու (մինչ սեպտեմբերի 30, 2022թ.) հաջորդ օրը</p>
<p>«Քաղաքացու Բյուջե»-ի մշակում և հանրայացում</p>	<p>ՊԲ մասին օրենքի հրապարակումից հետո 1 ամսյա ժամկետում</p>



This project is funded by the European Union
Մեծ Եվրոպական Մրցույթի ֆինանսավորմամբ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

